


ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ. Ջմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI–XIX դ. I կես), *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, 534 էջ + նկ.*:*

Բանալի բառեր՝ Ջմյուռնիա, Էգեյան ծովի առափնյակ, Հայօջախ, Էջմիածնի թեմ, արևելահայ գաղթականներ, տնտեսություն, առևտուր, մշակույթ, ներհամայնքային կյանք, եվրոպացի ճանապարհորդների կարծիքներ:

Ջմյուռնիայի և Էգեյան ծովի առափնյակի մի շարք բնակավայրերի Հայօջախները Հայոց ամենահին գաղթավայրերից են: Փոքրասիական Հնագույն քաղաքներից մեկի՝ Ջմյուռնիայի պատմությունն



անցնելով անտիկ, հելլենիստական, հռոմեական և բյուզանդական դարաշրջաններով՝ XVI դարից դարձել է Օսմանյան կայսրության, հանդուրժողականության առումով առաջինը համարվող քաղաքը մինչև 1922 թ., երբ ընկճելով հունական ռազմական ուժերը՝ քեմալականները ներխուժեցին քաղաք: Քրիստոնյա ազգաբնակչությունը այդ թվում և հայ հնամենի համայնքը, հիմնականում ոչնչացվեց: Ջմյուռնիան ամբողջովին թուրքացվեց ու այդպիսին մնաց մինչ օրս: Բազմազգ և բազմակրոն այս քաղաքի ու նրա երբեմնի ազգաշունչ և կոսմոպոլիտ հայ բնակիչների պատմությունը բազմիցս գրավել է հայ և այլազգի ուսումնասիրողների ուշադրությունը (Ղ. Ալիշան, Բ. Ալարս, Հ. Քոսյան, Ատոմ, Վ. Զարդարյան, Ա. Ալպոյաճյան, Լեո, նոր ժամանակների պատմությամբ զբաղվել է Ֆրանսիացի հետազոտող Հ. Ժորժըլենը¹): Եվ չնայած 2012 թ. Ռիչարդ Հովհաննիսյանի խմբագրությամբ լույս տեսավ տարբեր հեղինակների ուսումնասիրություններ ամփոփող «Հայկական Ջմյուռնիա-Իզմիրը» անգլերեն հատորը², տարածաշրջանում հայկական ներկայության առավել համակարգված պատմությունը գրի առնելը մնում էր չիրագործված: Վաստակաշատ պատմաբանասեր Ալբերտ Խառատյանի՝ 2022 թ. լույս տեսած « Ջմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI–XIX դ. I կես)» ծավալուն մենագրությունն առաջին անգամ լայն ընդգրկմամբ ներկայացնում է վերոնշյալ Հայօջախների պատմությունը սկզբից մինչև XIX դարի առաջին կեսը:

* Ներկայացվել է 23. V. 2022 թ., ընդունվել է տպագրության 07. VI. 2022 թ.:

¹ Տե՛ս նրա մենագրությունները H. G e o r g e l i n. La fin de Smyrne: du cosmopolitisme aux nationalismes (Paris: CNRS Editions, 2005); Smyrne dans la guerre, 1914–1922 (Athens: Hérodotos, 2019):

² Armenian Smyrna/Izmir. The Aegean Communities. Ed. by R. G. Hovannisian. California, Costa Mesa, California: Mazda Press, 2012.

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, վերջաբանից, հավելվածից, մատենագիտական ցանկից և անվանացանկից: Հեղինակն օգտագործել է բազմաթիվ անտիպ և տպագիր աղբյուրներ՝ հիշատակարաններ, փաստաթղթեր, ձեռագիր մատյաններ, որոնք վերաբերում են էգեյանի առափնյա հայոջախների պատմությանն ու դրան հարակից կրոնադավանական, տնտեսական, մշակութային հարաբերություններին:

Թեև Ա. Խառատյանը Ձմյուռնիայի պատմության շարադրումը սկսում է XVI դարից (քաղաքի հայկական գերեզմանատան հնագույն արձանագրությունը 1551-ն է), սակայն անդրադառնում է նաև դրանից առաջ տվյալ տարածքներում առկա հայկական ներկայության վերաբերյալ փաստերին, որոնք առկա են մասնավորապես բյուզանդական աղբյուրներում: Ինչպես նախորդ հետազոտողները, Ա. Խառատյանը ևս որպես տարածաշրջանում հայերի հնագույն հաստատման վկայություն հղում է Գեորգ Ասլանի 1909-ին հրատարակած Ֆրանսերեն աշխատությունը, որտեղ վկայված է էգեյանի առափնյակի Պերգամոն քաղաքում Վարդան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունից (571–576 թթ.) հետո այնտեղ հաստատված հայ նախարարների մասին (էջ 5): Ինչպես նկատել է նա, Ասլանը չի նշել սույն տեղեկության սկզբնաղբյուրը (էջ 6, մեր ենթադրությամբ՝ այն կարող էր լինել բյուզանդական որևէ աղբյուր), սակայն հետագա շարադրանքում հավանական է համարում, որ այն կարող էր ստեղծված լինել 570-ական թվականների երկրորդ կեսին (էջ 85):

Ներկայացվող աշխատության «Ձմյուռնիայի հայ գաղթածներ» գլխում աղբյուրագիտական հարուստ հիմքի վրա հեղինակը շարադրել է քաղաքի պատմությունը՝ դիտարկելով այն տարբեր քաղաքակրթությունների պատմության միջով, ժամանակագրորեն ներկայացրել է հայ համայնքների կազմավորման գործընթացը՝ կատարելով ուշագրավ դիտարկումներ, ինչպես՝ «Ձմյուռնիայի բնակչության, այդ թվում և հայ համայնքի ժողովրդագրական նկարագրի վրա, շատ ավելի, քան փոքրասիական որևէ քաղաքի, դարեր շարունակ իրենց հետքն են թողել երկրաշարժերը, հրդեհներն ու համաճարակները» (էջ 57): Քաղաքն ունեցել է հայերի պարբերական հոսքեր՝ ի հետևանք բուն հայաշխարհում և Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցած տարբեր իրադարձությունների: Ուշագրավ է հեղինակի՝ զմյուռնահայության կազմավորման մեջ արևելահայ տարրի (հատկապես՝ Արարատյան դաշտից, Նախիջևանից, Արցախից և Սյունիքից գաղթածների) վերհանումը (էջ 93, 99), ինչը պայմանավորված է մասնավորապես XVI–XVII դդ. այդ շրջանների վաճառականության փոքրասիական առևտրական ուղիների վերաբերյալ քաջատեղյակությունը (էջ 117–118): Պատմաբանասերն իրավացիորեն վկայակոչում է նաև լեզվաբանական աշխատություններ՝ ցույց տալով Ձմյուռնիայի և շրջակայքի հայ բնակիչների բարբառի արևելահայ շերտերը (օրինակ՝ էոդեմիչի հայերը խոսել են Գորիսի կամ դրան մոտ բարբառներով, էջ 228):

Գլուխ 2-ը («Գաղթածները՝ էջմիածնի թեմ») վերաբերում է Ձմյուռնիայի հայության հոգևոր կյանքին: Առաջին ենթագլխում («Ձմյուռնիայի տերունի թեմ») Ա. Խառատյանը պատասխանել է հայագիտության մեջ որոշակի պատասխան չստացած մի հարցի՝ երբ է Ձմյուռնիան, որպես տերունի թեմ, անցել էջմիածնին: Դարձյալ չհավանելով վերջնական պատասխանի՝ առ ի չգոյե պատմական վավերագրերի, պահպանված պատմական փաստերի որոշակի

քննություններից հետո նա այդ տարեթիվերը համարել է 1614–1615 թվականները (էջ 121): Հետագա շարադրանքում հեղինակը ներկայացրել է Զմյուռնիայի հարուստ թեմի համար մղված մրցակցությունը, նվիրական այցելությունները, էջմիածնին տրվող տերունի վիճակի տուրքերը, 1614–1844 թթ. թեմում գործած 32 առաջնորդներին և այլն: Զմյուռնիայի հայկական եկեղեցիներին նվիրված ենթագլխում մասնավորապես քննված են Ս. Ստեփանոս և Ս. Բարդուղիմեոս եկեղեցիների նույնական, թե առանձին լինելու հարցը: Հեղինակը հանգում է հավանական եզրակացություն. «Ժամանակի ընթացքում... Ս. Բարդուղիմեոս տաճարը չի վերականգնվել ... Երբ արդեն ոչ համալիրի տեսքով մնացած մյուս կառույցը՝ Ս. Ստեփանոսը մի որոշ ժամանակ սովորույթի ուժով շարունակել է կոչվել զույգ անուններով՝ Ս. Ստեփանոսի և Ս. Բարդուղիմեոսի եկեղեցի. ... մինչև որ արդեն 1780-ականից վերջնականապես տիրապետող է դարձել մեկ սրբի անունը կրող՝ Ս. Ստեփանոս եկեղեցի անվանաձևը» (էջ 189):

Գլուխ 3-ը վերնագրված է «Էջեյանի այլ գաղթօջախներ: Տնտեսությունն առափնյակում», որի առաջին ենթագլխում («Զմյուռնիայի չրջակայքի բնակավայրեր») ներկայացված է հայ կյանքը հետևյալ վայրերում՝ Այդըն, Մանիսա, Էդեմիշ, Պերկի, Քրքաղաչ, Գնրք, Բերգամա, Դենիզլի, Նագիլի, Քասաբա, Աքհիսար, Քուչադա, Մենեմեն և Սյոքե: Հեղինակը տալիս է տեղեկություններ ոչ միայն տեղի հայերի, այլև մյուս ազգությունների մասին, ճշտում մասնավորապես հայերի հոգևոր վիճակի հետ կապված հարցերը: Առանձին ենթագլխով ներկայացնելով Էջեյանի համայնքների հողագործությունը և արհեստները՝ հեղինակը, հենվելով Մատենադարանի կաթողիկոսական դիվանի փաստաթղթերի վրա, նշել է, որ հակված է կարծել, թե այդ տարածաշրջանի հայերը մշակել են սեփականատիրական տարբեր ձևերի պատկանող հողահանդակներ (էջ 267): Մեկ այլ կարևոր ենթագլուխ է «Զմյուռնիայի հայ վաճառականությունը», որտեղ մասնավորապես ներկայացված են քաղաքի հայ առևտրականների կապերն Իտալիայի (Լիվոռնո, Տրիեստ), Ֆրանսիայի, Հոլանդիայի, Ռուսաստանի, ավելի ուշ՝ Անգլիայի հետ: Իտալական առևտուրը բարենպաստ պայմաններ էր ընձեռում հայ վաճառականներին, որոնք «չատղեպքերում վճռական նշանակություն էին ունենում այն խտրական քաղաքականությունը դիմակայելու համար, որ Օսմանյան Թուրքիայում կիրառվում էր առհասարակ ոչ մահմեդական վաճառականության համար» (էջ 305): Հեղինակն իրավամբ նշում է, որ XVI–XVIII դդ. զմյուռնահայ վաճառականության պատմությունը միահյուսվում է ժամանակի պարսկաբնակ և օսմանաբնակ այլ վայրերի խոշոր առևտրականների պատմությանը, քանի որ նրանց բոլորի համար Զմյուռնիան եղել է «և՛ միջազգային, և՛ ներքին զավառների առևտրի ընդհանրական հանգրվան» (էջ 320):

Գլուխ 4-ը ներկայացնում է «Ներհամայնքային կյանքը Զմյուռնիայում»: Հեղինակը ներհամայնքային կյանքի կարևոր գործոն է համարել նախ եկեղեցին, ապա՝ ազգային վարչությունը դարձած խորա (հորա) կոչվող դրամական-ֆինանսական կառույցը: Զմյուռնիայում ու նրա շրջակայքի ներհամայնքային կյանքում նկատելի է եղել XIX դ. սկզբին հայ եկեղեցու պատմության մեջ հայտնի Դավիթ-Դանիելյան ներհակությունների արձագանքները (էջ 352–362):

Աշխատության 5-րդ գլուխն է «Մշակույթը գաղթօջախում»: «Գրչությունը» ենթագլխում կարևորվում է Զմյուռնիայի տեղը որպես ուշ միջնադարի հայ գրչության կենտրոններից մեկի, հիշվում է 1759 թ. սկզբնավորված գրատպությունը, որը հետագա հարյուրամյակին զարգանալով՝ կարևոր դեր էր խաղալու արևմտահայության մտավոր զարթոնքի մեջ: Հեղինակն ատանձին ենթագլուխներով ներկայացրել է նաև քաղաքի վարժարանները և կրթական բարեփոխական ընկերությունները՝ մասնավորապես կենտրոնանալով արևմտահայ իրականության մեջ աննախադեպ «Սյունյաց ընկերության» գործունեության վրա: Եվ, վերջապես, լինելով հայ մամուլի պատմության խորագիտակ և բազմամյա հետազոտող՝ նա «Տպագրություն և պարբերական մամուլ» ենթագլխում շարադրում է Զմյուռնիայի տպագրիչների (Տետեյան եղբայրներ և այլք) գործունեության ու պարբերականների («Արշալոյս Արարատեան») պատմությունը՝ զնահատելով դրանց բացառիկ և ազդեցուկ դերը: Նա իրավամբ նշում է, որ «1840–1850-ական թթ. «Արշալոյս Արարատեանը» արևմտահայ հասարակության մեջ սակավաթիվ թերթերից մեկն էր, որ յուրացրել էր ժամանակի եվրոպական մամուլի մշակութային ընդունված մոտեցումները՝ առաջին հերթին նյութի մատուցման (խմբավորման և ժանրային դրսևորումների) և հասարակական կարծիքն արժևորելու տեսակետից» (էջ 429): Հեղինակի եզրակացմամբ՝ զմյուռնահայ մամուլը պոլսահայի հետ «հաստատուն հիմք է ստեղծել հետագա տասնամյակների հայ հասարակական մտքի և մշակույթի արդիական դրսևորումների համար» (էջ 484):

Հեղինակը, ներկայացնելով նախորդ ուսումնասիրողների արտահայտած կարծիքները, քննական մոտեցում է հանդես բերել դրանց հանդեպ՝ երբեմն մոտենալով դրանց վերապահությամբ, հերքելով կամ հաստատելով հավելյալ տեղեկություններով: Բազմաթիվ օրինակներից բերենք հետևյալները: Նշելով, որ մի շարք հեղինակների կարծիքով հայերը Զմյուռնիայում և հարակից շրջաններում հայտնվել են Կլիկիայի հայկական թագավորության անկումից հետո՝ XIV դ. վերջին քառորդին՝ ինառատյանն ակնհայտ չի համարում տարածաշրջանում հայերի տեղաշարժերի հիմքերը՝ գրելով. «Լավագույն դեպքում, թերևս, կարող ենք նկատի առնել ընդամենը գաղթի հավանականությունը և ոչ ավելին» (էջ 9): Եվ կամ, հղելով Հ. Դիմաքսյանի վկայությունը, որ Քրքաղաչի կանայք ու երեխաները հայերեն են խոսել «զմիւռնացւոց եղանակաւ», իսկ տղամարդիկ, ընդհանրապես, թուրքախոս են, նա գրել է. «... այսպիսի տարօրինակ բազմաբարբառայնություն չի կարող լինել, որպեսզի լեզվի գործածության հիմքում ընկած լինի սեռատարիքային գործոնը... Եվ բացի այդ, XVIII դ. առաջին կեսին գաղթած հայախոս հայերը չէին կարող հանկարծակի թուրքախոս դառնալ» (էջ 230): Մեկ այլ կարևոր ճշտում. հիշատակելով XIX դ. երկրորդ կեսից այնքան մեծարված Զմյուռնիայի Ս. Մեսրոպյան վարժարանը, ինառատյանը նշում է, որ այն Ս. Մեսրոպյան է կոչվել 1836 թ. ոչ վաղ՝ տարբեր աղբյուրներում մինչ այդ թվականը հիշված լինելով այլ անուններով (էջ 385):

Աշխատության հավելվածն է «Ճանապարհորդները Զմյուռնիայում (XVII դ. I կես – XIX դ. I կես)», որտեղ ի մի են բերված XVII–XIX դդ. ընթացքում Փրանսիացի և անգլիացի ուղեգիրների վկայությունները Զմյուռնիայի հայերի մասին: Հեղինակը, որպես այդ եվրոպացիների ուղեորությունների նպատակներ, նշում է՝ «Առևտուր և դրա իրականացման միջավայր, տեղաբնակ

ազգերի ու նրանց դավանական ինքնության նկարագիր, նրանց փոխհարաբերությունների ու տնտեսական ներուժի բացահայտում, Օսմանյան թուրքիայի տնտեսության և կառավարման ճանաչողություն ու բնութագիր» (էջ 485): Հիմնվելով նրանց տեղեկությունների վրա՝ Խառատյանը դարձյալ վերապահություն է ցուցաբերում է, որ Զմյուռնիայի հայերի թիվն ու ժողովրդավարում տատանվել է 7–10 հազարի միջև (էջ 498):

Մատենագիտական ցանկն ընդգրկում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի բազմաթիվ հավաքածուներ և ֆոնդեր, հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հայ պատմիչների ու եվրոպացի ուղեգիրների երկեր, ինչպես նաև մեծաքանակ պատմաբանասիրական մենագրություններ և ուսումնասիրություններ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և թուրքերեն:

Կցանկանայինք արդեն իսկ առկա հարուստ նյութին կատարել հետևյալ լրացումները.

Զմյուռնիայի հայերի մասին տեղեկություններ թողած եվրոպացի ճանապարհորդների մեջ արժե հիշել նաև XVIII դարի երկու շվեդ ճանապարհորդների՝ Միքայել Օլոֆսոն Էնեմանին (1676–1714) և Ֆրեդերիկ Հասելքվիսթին (1722–1752), որոնք իրենց ուղեգրություններում մասնավորապես նկարագրել են Զմյուռնիայի Աբ. Ստեփանոս հայկական եկեղեցին³:

XIX դարի առաջին կեսին Կոստանդնուպոլսին զուգահեռ հայ թատրոնն իր առաջին քայլերն է կատարել նաև Զմյուռնիայում: Տակավին 1836-ին Զմյուռնիայի վարժարանում տեսուչ Անդրեաս Փափագյանի ղեկավարությամբ առաջին անգամ հայ բեմում ներկայացվել է Կառլո Գոլդոնիի «Հյուրանոցի տիրուհին»⁴: 1851-ին Մատթեոս Մամուրյանի և Մարկոս Աղաբեկյանի ղեկավարությամբ ներկայացումներ են կայացել Զմյուռնիայում⁵:

Այբերտ Խառատյանի «Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթածախները (XVI–XIX դ. I կես)» աշխատությամբ հայ գաղթածախների պատմությունը նվիրված մասնագիտական գրականությունը հարստացել է ևս մեկ մեծարժեք ուսումնասիրությամբ, որը գիտական բարձր մակարդակով, աղբյուրագիտական հարուստ հենքով, պատմական վկայությունների վերլուծությամբ ու քննական մոտեցմամբ ներկայացնում է Հնագույն հայոջախներից մեկի ամբողջական և բազմակողմանի նկարագիրը:

ԱՐԾՎԻ ԲԱԽԶԻՆՅԱՆ

Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթալայրերի և Սփյուռքի բաժնի ախպ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ գաղթալայրերի և Սփյուռքի պատմություն, արվեստի պատմություն, հայազգի գործիչներ: Հեղինակ է 14 մենագրության և 100-ից ավելի հոդվածի: artsvi@yahoo.com

³ Այս մասին տե՛ս Ա. Բախչինյան. Հայությունը սկանդինավյան երկրներում (հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչություններ), Երևան, 2010, էջ 98–101:

⁴ Բ. Հաբուսյան. 19-20-րդ դարերի հայ թատրոնի տարեգրություն, հ. 1, Երևան, 1980, էջ 13:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 19: